միջով, յորում բազում ձկունք կային իբրեւ զաւազ:

ԿԵՍԱՐԻԱ

Եւ անտի բազում զեղօրէիւք եւ լերամբք հասաք ի Կեսարիա մայրաքաղաքն, որ ունի երկու պարիսպ, ներսի եւ դրսի: Կայր երկու եկեղեցի ներսն՝ Սուրբ Աստուածածին եւ Սուրբ Սարգիս, բայց զետնափոր եւ խաւարչային տեղիս, որ մէրտիվանօք կ՝իջնուն եւ ի վայտից: Եւ հինգհարիւր տուն հայ եւ աւելի կայր ի նմա, փարթամ վաճառականք եւ խոճայք անվանի մեծատունք. բայց ազքատն աւելի էր. այլ զանահաթ չունին, ամէնն դերճակ եւ խաֆթանչիք են: Ներսցիք հայնակ չի գիտեն, միայն տաճկնակ, Ֆարսի. իսկ դրսեցիք հայնակ գիտեն: Բայց Ղայսարու տաճիկն խիստ չար է եւ վատ. սաֆի էմիրք են, հաւատոց թշնամիք. եւ աւանն շատ է: Տներն խամ քարրիչ է. դռվին փոքր, կկղելով մըտնուն. վասն որոյ եւ քաղաքն աւեր եւ վէրան: Ունի խաներ, պէզէստան, խանութնի, չարշու պազար եւ ոսկերչինոց. բայց սակաւ մարդ ի նմա կ՝երեւին. մի որ ճէլալին աւիրել էր. եւ մի որ ունի էմիրի զուլումէ չեն ի գալ չէնլիք անել:

Գնացի մօտ Գրիգոր վարդապետն, առ որ կացեալ էի. զոր սիրեալ զիս՝ յոյժ ուրախացաւ եւ սիրով զիս ընկալաւ: Տեսի եարոյք

34 կեսարիայ: — 35 պարիս(պ): — 42 թէրճակ: — 45 թրացիք: — 49 որո: — 50 պէզէստան: